

սակէտին՝ կարծում ենք, սակայն, որ Բէլի կերպարում համատեղուած են եւ այլ թագաւորներ. հետեւաբար, վիպասքն արտացոլում է առաւել մեծ ժամանակաշրջանի իրողութիւններ, որոնք այլ լոյսի տակ են ներկայացնում հայոց պատմութեան վաղագոյն շրջանը: Ասուածը հիմնաւորելու համար կրկին դիմենք Պատմահայր Խորենացուն, որը դէպքերը ներկայացնում է հետեւեալ յաջորդականութեամբ:

Բարեւոյնի ճախողուած աշտարակաշինութիւնից եւ լեզունների խառնակումից յետոյ, երբ մարդկային ազգը տարածուած էր բոլոր երկրի լայնութեան վրայ, Տիտանեան Բէլին, որն ինքը Աստուածաշնչի Քամեան Ներբովթն է, պատահամբ յաջողուած է բռնանալ եւ բոլոր երկիրը գրաւել: Չցանկանալով ենթարկուել բռնակալին՝ ազատատենչ Յապետոսեան Հայկը Բարեւոյնում Արամանեակ որդին ծնելուց յետոյ իր բոլոր տունուտեղով եւ իրեն յարած եկուորներով չլուծ է դէպի Արարադի երկիրը: Այստեղ Հայկը բնակուած է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակաւաթիւ մարդիկ՝ առաջուց ցրուածներէ: Հայկը, նրանց իրեն հնազանդեցնելով, բնակութեան տուն է շինում եւ տալիս է ժառանգութիւն Կադմոսին՝ Արամանեակի որդուն, իսկ ինքը մնացած մարդկանցով շարժուած է դէպի հիւսիսարեւմուտք եւ բնակուած մի բարձրաւանդակ դաշտում ու այդ լեռնադաշտի անունը կոչում է Հարք: Այդտեղ նա տուն է շինում, որն իր անունով կոչում է Հայկաշէն: Այդ դաշտի հարաւային կողմում, մի երկայնանիստ լեռան մօտ, ապրելիս են եղել առաջուց ցրուած սակաւաթիւ մարդիկ, որոնք կամովին հնազանդուած են դիւցազնին (այս տեղեկութեան վերաբերեալ այլ կարծիք ունենք, որի քննար-

կումը դուրս է ներկայ յօդուածի շրջանակներից – Օ. Խ.):

Տիտանեան Բէլը իր թագաւորութիւնն ամէնքի վրայ հաստատելուց յետոյ իր որդիներից մէկին ուղարկում է Հայկի մօտ, որ նա հնազանդութեան գայ եւ խաղաղութեամբ ապրի որտեղ կը հաճի: Հայկը Բէլի պատգամաւորներին յետ է դարձնում խստութեամբ պատասխանելով: Այն ժամանակ Տիտանեան Բէլը զօրք է ժողովում նրա դէմ եւ հասնում Արարադ երկիրը՝ Կադմոսի տան մօտ: Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մօտ՝ իրենից առաջ սուրհանդակներ ուղարկելով, իսկ Բէլը, յանդուգն ու անճոռնի ամբոխի զօրութեամբ, շտապում էր հասնել Հայկի սահմանները: Հայկը, հաւաքելով իր որդիներին եւ եղած՝ թուով շատ նուազ մարդկանց, գնում հասնում է մի ծովակի փի, որի ջրերն աղի են եւ մանր ձկներ են պարունակում: Այնուհետեւ, ամբողջ ասպարէզներ դէպի առաջ անցնելով, հասնում են բարձրագոյն լեռների միջեւ մի տաշտածեւ տեղ, ուր եւ ջրերի հոսանքի աջ կողմում, բարձրաւանդակի վրայ, ամուր դիրք գրաւելով՝ տեսնում են Բէլի բազմաթիւ ամբոխի անկարգ հրոսակը, որը յանդուգն յարձակումով ցիրուցան վազվզում էր երկրի երեսի վրայ: Ծակատամարտի ժամանակ երկու կողմից էլ ոչ սակաւ մարդիկ են ընկնում, բայց մարտի ելքը անորոշ է մնում: Այդ անսպասելի, տարակուսական դիպուածը տեսնելով՝ Բէլը զարհուրում է եւ, ետ քաշուելով, սկսում է բլուրը բարձրանալ, որպէսզի ամբոխի մէջ ամրանայ եւ երկրորդ անգամ ճակատամարտ տայ: Հայկը, այս բանը հասկանալով, առաջ է նետուած եւ, մօտ հասնելով նրան, նետահարում է: Բէլի ամբոխը, այս քաջութեան ահագին գործը տեսնելով, փախչում է: Հայկը ճակատամարտի տեղը

դարձնում է դաստակերտ եւ անունը դնում Հայք, որտեղից եւ գաւառը կոչուած է Հայոց Ձոր, իսկ այն բլուրը, որտեղ Բէլն է ընկնում, Հայկը կոչում է Գերեզմանք: Այնուհետեւ, Բէլի դիակը դեղերով զմուսելով, Հայկը հրամայում է տանել Հարք եւ թաղել մի բարձրաւանդակ տեղում: Ահա մեր աշխարհն էլ Հայկի անունով կոչուած է Հայք: Դրանից յետոյ Հայկը դառնում է իր բնակութեան տեղը, Կադմոս թողին շատ բան է պարգեւում ու հրամայում նրան իր առաջին տանը բնակութիւն հաստատել:

«Հայկ եւ Բէլ» աւանդութիւնն ընդհանուր գծերով ներկայացուած է եւ հետագայ հայ մատենագիրների աշխատութիւններում, որոնք թուարկելու անհրաժեշտութիւն չի զգացուած: Նշենք միայն, որ Արծրունեաց տան պատմիչ Թովմայ Արծրունին վերն ասուածին աւելացնում է. «... իսկ Ներբովթն իրեն հռչակեց որպէս ամենահին, ժամանակից դուրս... ու ինքնակամօրէն իրեն համարեց աստուած եւ մեծ զօրութեամբ թագաւորեց Բարեւոյնում: Նա տիրեց երկնքի տակ եղած բոլոր ժողովուրդներին: Այնուհետեւ արձալկեց ահաւոր հրաման՝ ամէնուրեք կանգնեցնել իր արձանը, որին, իբրեւ աստուծոյ, երկրպագել ու զոհ մատուցել»: Այնուհետեւ պատմիչը նշում է թէ. «Պատմագիրներինց ոմանք ասում են, թէ Բէլը փախաւ Ասորեստան, բայց դրանք դատարկ խօսքեր են... Ժամանակից դուրս համարուող Բէլը սպանուեց իր դէմ ապստամբած Հայկից՝ Թորգոմի որդուց»: Ամփոփելով իր խօսքը՝ պատմիչը նշում է, թէ «Բէլը բռնութեամբ իշխեց 62 տարի»⁵ (էջ 46-47):

Անհաւատալի է թուում, բայց փաստը մնում է այն, որ ժողովուրդն, այս աւանդութիւնը հազարամեակներ շարունակ պատմելով, մեր օրերն է հասցրել մի քա-

նի տարբերակներով: Դրանցից առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում երկուսը: Աւանդութիւններից մէկում ասուած է, որ կռապաշտ թագաւոր Բէլը մեծ զօրքով կռուի է գալիս հայոց թագաւորի վրայ, որը եւ, սպանելով Բէլին, հանում է նրան Նեմրութ սարի գագաթը եւ, այնտեղ թոնիր պատրաստելով, մէջն է կախում ու վառում: Աստուծոյ հրամանով կրակը ջուր է դառնում, որպէսզի Բէլից մնացած մոխիրը, քամուց քշուելով, աշխարհը չապականի: Բէլի մարդիկ եւ ուղտերը քարանում են: Միւս աւանդութեան մէջ ասուած է, թէ Նեմրութ թագաւորը կամենում է, որ իրեն աստուած համարեն, որի համար եւ Նեմրութ սարի վրայ սկսում է դաստակերտ կառուցել՝ վանայ լճի արեւմտեան մասում գտնուող Դատուան աւանի ծովածոցից շինանիւթ կրելով: Դրանից յետոյ նա բարձրանում է իր կառուցի վրայ ու աղեղը լարում, որ է իր կառուցի վրայ ու աղեղը լարում, որ Աստուծոն սպանի: Աստուած, տեսնելով սրա ամբարտաւանութիւնը, կայծակնազար է անում, իսկ մարդկանց եւ ուղտերին քարացնում: Աւանդութիւնների համատեղութիւնից դժուար է նկատել, որ մեծատեղից դժուար է նկատել, որ Հայկը մի դէպքում փոխարինուած է անորոշ հայոց թագաւորով, իսկ միւսում իր տեղն Աստուծոն է զիջում (նշենք, որ Հնում մոլորակներն ու լուսատուները Հնում մոլորակներն ու լուսատուները Հարցերին առնչուող այլ աւանդութիւնների ազդեցութիւններ, որոնց քննութիւնն առանձին հետազօտութեան նիւթ է: Այստեղ նշենք միայն, որ հայ մատենագրութեան մէջ Հայկեան շրջանը հանարուած է Ք.ա. 2493 թ.: Այդ ժամանակվա գոյացել է նրանից, որ հայկական ա-

